

ՀԱՐՑԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԲԱՐԴ ՀԱՄԱՂԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. Գ. ԹԵԼՅԱՆ

Լեզվի հիմնական գործառույթը՝ մարդկային հաղորդակցությունը, իրականանում է նախադասությունների միջոցով. այս առումով նախադասության դերը լեզվական միավորների ստորակարգության մեջ բացառիկ է: Նախադասությունը սահմանելիս հետազոտողները նրա կառուցվածքային և իմաստային հատկանիշների հետ կարևորում են նաև նրա միջոցով խոսողի հաղորդակցային նպատակադրման դրսևորումը, որին «միշտ մասնակցում է հնչերանգը»¹: Լեզվի իմաստակիր միավորների հաղորդակցային կողմի քննությունը լեզվաբանների սենտուն ուշադրության առարկան է դարձել վերջին տասնամյակներում՝ կապված հատկապես խոսքային ակտերի տեսությանը նվիրված և պրագմալեզվաբանական ուսումնասիրությունների ծավալման հետ ²: Չի կարելի ասել, սակայն, թե ավանդական քերականագիտությունը, զբաղված լինելով հիմնականում նախադասության կառուցվածքային հատկանիշների նկարագրությամբ, լիովին շրջանցել է նրա հաղորդակցային կողմը: Մասնավորապես նախադասությունների հնչերանգային տարբեր տիպերը, որպես հենց այս կարգի տարբերակներ, պատշաճ ուշադրության են արժանացել շարահյուսագիտական աշխատություններում: Նախադասության հնչերանգային տեսակներն առանձնացնելիս, սակայն, նկատի է առնվել գլխավորապես պարզ նախադասության կառուցվածքային տիպը, որի շրջանակներում էլ շարահյուսագիտության մեջ նկարագրվել են նախադասության պատմողական, հարցական, հրամայական և բացականչական տիպերը: Պարզ նախադասության հնչերանգային (կամ, Գ. Զահուկյանի տերմինով, եղանակառոգանական) տեսակների՝ բարդ նախադասության կազմում համատեղ հանդես գալու, դրանց զուգորդելիության օրինաչափությունների հարցը հայերենագիտության մեջ հատուկ չի քննարկվել. եղել են միայն առանձին դիտարկումներ³: Մինչդեռ պետք է նկատի ունենալ, որ բարդ նախադասության, որպես լեզվական ստորակարգության բարձրագույն միավորի, կազմավորման մեջ կարևոր է այն կազմող մասերի միաժամանակ և՛ բովանդակային, և՛ կառուցվածքային, և՛ հնչերանգային համատեղելիությունը⁴: Այս հատկանիշները փոխկապակցված են, և հաճախ հնչերանգների անհամատեղելիության պատճառով պարզ նախադասությունների կապակցությունը բարդ նախադասություն չի ձևավորում:

Պարզ նախադասության տարբեր առոգանական տիպերի զուգորդումը որոշակի առանձնահատկություններ է դրսևորում համադասական և ստորադասական կառույցների կազմում:

¹ «Русская грамматика», т. II, Москва, 1980, с. 89-90.

² Տե՛ս օրինակ, «Новое в зарубежной лингвистике», вып. XVI (Лингвистическая прагматика), Москва, 1985, вып. XVII (Теория речевых актов), Москва, 1986:

³ Հարցի պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս Լ. Թելյան, Նկատառումներ բարդ նախադասության հաղորդակցային տիպերի վերաբերյալ, «Գիտական նյութերի ժողովածու», Վանաձոր, 2001, էջ 26-30:

⁴ Տե՛ս Գ. В. Валимова, Функциональные типы предложений, Ростов-на-Дону, 1967, էջ 35:

Այստեղ մենք անդրադառնալու ենք բարդ նախադասության հաղորդակցային բազմազան տարբերակներից մեկի՝ հարցական բաղադրիչներով համադասական կառույցի շարահյուսական և ոճական նկարագրին:

Ի տարբերություն ստորադասական կառույցների, որոնցում ստորադասվող մասի բովանդակային, կառուցվածքային ու քերականական հատկանիշները (օրինակ, բայի եղանակը, ժամանակը) հիմնականում թելադրվում են զրլխավորի նույն հատկանիշներով, համադասական նախադասությունները ավելի ազատ են բաղադրիչ մասերի բովանդակային և կառուցվածքային զուգորդելիության տեսակետից: Այստեղ է, որ առավել կարևորվում է մասերի հնչեռանգային համատեղելիության հարցը:

Բարդ համադասական նախադասության հաղորդակցային զանազան տարբերակների համար հիմք է ընդունվում պատմողական բաղադրիչներով կաղապարը: Հայ շարահյուսագիտության մեջ ընդունված է առանձնացնել համադասական կառույցի բաղադրիչների միջև իմաստային հարաբերությունների չորս տեսակներ՝ միավորական, ներհակական (հակադրական), տրոհական և հավելական (հարակցական):

Հաղորդակցային տարբեր բաղադրիչների զուգորդման առումով սրանք, բնականաբար, տարբեր հնարավորություններ են դրսևորում:

Հարցական բարդ համադասական նախադասությունները չեզոք կամ պատմողական տարբերակի հետ կառուցվածքային ընդհանրություն ունենալով հանդերձ, իմաստի և ոճական կիրառության առումով բավական տարբեր են նրանից: Նախ, երկու հարցական բաղադրիչով համադասական կառույցը առավել հաճախ գործածվում է գեղարվեստական և ժողովրդախոսակցական ոճերում, ընդ որում հավասարապես տարածված են բուն (հավաստական) և ճարտասանական հարցում արտահայտող բաղադրիչներով նախադասությունները: Բանաստեղծական խոսքում առավել հաճախական են ճարտասանական հարցում արտահայտող բարդ համադասական նախադասությունները: Իմաստային հարաբերությունների վերը նշված չորս տեսակներից հարցական կառույցի մեջ առավել հաճախ դրսևորվում են միավորական և տրոհական հարաբերություններ:

1. **Միավորական հարաբերությունը արտահայտող հարցական բարդ համադասական նախադասություններ:** Այս նշանակությամբ բնութագրվող չեզոք (պատմողական) կառույցները արտահայտում են հիմնականում թվարկման իմաստ՝ ուղեկցված մասերի ստորոգյալների ժամանակային նույնության կամ հաջորդման երանգով: Թվարկման հարաբերությունը հաճախ կարող է լրացուցիչ այլ իմաստներ ևս դրսևորել՝ պատճառահետևանքային, պայմանի, հակադրության: Կապակցությունը կարող է լինել շարահարական կամ էլ իրականանալ միավորիչ շաղկապների (*և, ու, ևս, նաև, այլևս, և՛...և՛, թե՛...թե՛ և այլն*) օգնությամբ:

Հարցական բաղադրիչներով բարդ համադասական նախադասությունները ևս, լինելով նույն կաղապարի խոսքային իրացումներ, կարող են բնութագրվել իմաստային նշված հարաբերություններով և կապակցվել նույն միջոցներով: Սակայն դիտումները ցույց են տալիս, որ այս հնչերանգով օժտված նախադասություններում առավել հաճախ դրսևորվում է գործողությունների կամ փաստերի թվարկման անխառն հարաբերություն՝ լրացված հիմնականում համաժամանակության իմաստային նրբերանգով: Կապակցության միջոցներից գերակշիռ տեղ ունի շարահարությունը: Ժաղկապներից նման կառույցներում ամենից հաճախադեպ են *և-ը, ու-ն և էլ-ը*: Հարցական նախադասությունների հաղորդակցային յուրահատկությամբ պայմանավորված՝ նրանցում գործածվում են, բացի հարցական բառերից, նաև կայուն շարահյուսական

⁵ Տե՛ս օրինակ, Գ. Լ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984, էջ 38, Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 355:

կապակցություններ և այլն: ԾԱՂԿԱՊԱՎՈՐ միավորական նախադասությունների հարցական բաղադրիչներում սովորաբար գործածված են լինում հարցական բառեր, ընդ որում առավել հաճախակի են տարբեր հարցական դերանունների կիրառությունը՝ յուրաքանչյուր բաղադրիչի մեջ նախադասության տարբեր անդամների վերաբերյալ հարցումներով: Բնական է, որ շաղկապավոր կառույցի մեջ միավորական հարաբերությունը ավելի հստակ է դրսևորվում: Մասերի գործողությունների համաժամանակություն է արտահայտվում ստորոգյալների ժամանակային պլանների նույնության դեպքում, սակայն պետք է նշել, որ անցյալ կատարյալի ձևերի զուգորդմամբ կառույցներում իբրև մասերը կապակցող միջոց հիմնականում կիրառվում են *և, ու* շաղկապները: Միավորիչ կրկնադիր շաղկապներից հարցական կառույցներում սովորական է *էլ... էլ* շաղկապը:

**Օրինակ. Էլ ո՞նց հրաշքներ տեսներ
Խանութպան Համոյի հոգին,
Էլ ինչու՞ շարժվեր տեղից... (Ե2, ՊԲ, 105)**

Գեղարվեստական խոսքի մեջ ավելի հաճախադեպ են անշաղկապ հարցական բարդ համադասական նախադասությունները: Միավորական հարաբերությունը, չունենալով ձևական ցուցիչ (*և, ու* շաղկապներ), հաճախ բարդված է իմաստային այլ երանգներով: Համարասական կառույցը կարող է լինել նաև բազմաբարդ՝ համադասական կամ ստորադասական մասերով՝ Պետք է նշել նաև, որ այս կարգի համադասական կառույցների մեջ ճարտասանական հարցումների միավորումը զգալիորեն գերազանցում է բուն հարցական նախադասություններով կառույցների քանակը: Հենց ճարտասանական հարց պարունակող միավորական նախադասություններում էլ հիմնականում թվարկման նշանակությունը խճողվում է իմաստային այլ, հատկապես պատճառահետևանքային կամ պայմանահետևանքային հարաբերությունների նրբերանգով: Իմաստային այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս նըշված կառույցները փոխակերպելու պատմողական ստորադասական տարբերակների, որոնք, իբրև շարահյուսական հոմանիշներ, զուրկ են հարցական կառույցների ռճական գունագեղությունից և գեղարվեստական առումով նվազ ազդեցիկ են: Հմմտ., օրինակ.

Հո շալակո՞ղ չպիտի տանի, հո նախագահն ու բրիգադիրը անհասկացող՞ չեն: Ծալակով չպիտի տանի, (քանի որ) նախագահն ու բրիգադիրը անհասկացող չեն:

Իբրև թվարկման նշանակություն դրսևորող կառույցների քերականական առանձնահատկություն պետք է ընդգծել ինչպես պատմողական, այնպես էլ հարցական համադասական նախադասության ձևավորումը բաց կառուցվածքների միջոցով: Համազոր պարզ նախադասությունների քանակը մեծ կառույցներում չի սահմանափակվում: Սա պայմանավորված է, անշուշտ, համադասական կառույցների կոնկրետ բառային բովանդակությամբ ևս: Օրինակ, **Ինչի՞ համար են այս պեղումները, ինչու՞ ամուսնանում են քսան տարեկանից հետո, ինչու՞ տաս տարեկան աղջիկը մարդու չի տխրեցնում, իսկ մեծ աղջիկները տխրեցնում են...**(ՀՄ, 1, 356-357)

Ինչպես ցույց են տալիս դիտումները, անշաղկապ միավորական կառույցների մասերում հարցական բառերի (հիմնականում՝ դերանունների) գործածությունը անհամեմատ ավելի տարածված է, քան առանց հարցական բառի հարցումների կապակցությունը: Սա վերաբերում է ինչպես ճարտասանական, այնպես էլ բուն հարցական բաղադրիչով կառույցներին: Հնարավոր է առանձնացնել մասերի կառուցվածքներով կամ կոնկրետ բառային տեղադրմամբ, հարցական բառերի առկայությամբ կամ բացակայությամբ բնութագրվող անշաղկապ միավորական նախադասության մի քանի տարբերակներ:

՝ Այս տիպի կառույցների հանգամանալից քննությունը դուրս է մեր նպատակից:

Ա) Երկու մասերում գործածվում են միևնույն հարցական բառերը: Օրինակ՝

Է՛ր է՛... կյանքն էլ մի բան չի... Ինչու՞ ենք ծնվում, ինչու՞ ենք մեռնում: (ՀՄ, 1, 66)

Էս ի՞նչ ճիպոտ է, էս ի՞նչ երեխայի ձեռքից ես առել: (ՀՄ, 1, 82)

Տխրությունը մեր անեղծ

Ո՞վ է պղտորել,

Ո՞վ է արդյոք նրա մեջ

Թույն ու մաղձ թորել: (ԵԶ, ԱԶԵ, 179)

Այս կարգի նախադասությունների ստորոգյալները սովորաբար նույն քերականական հատկանիշներն ունեն, թեև երբեմն կարող են տարբերվել դեմքով կամ ժամանակային պլաններով: Այսպես, օրինակ.

Ինչու՞ ես լռել, շվարել,

Ինչու՞ է լռությունը անդեմ

Ժարել իր պատճենները քարե: (ԵԶ, ԱԶԵ, 30)

կամ՝

Արդյոք ո՞ր վարպետը մեծ

Հորինել է դեմքը ձեր,

Արդյոք ո՞ր Ոգին տվեց

Ձեր դեմքին լուսե գծեր: (ԵԶ, ՊԲ, 275)

Սովորական են նաև այնպիսի տարբերակներ, որոնցում հարցական բառը գործածվում է միայն առաջին բաղադրիչում և վերաբերում է ամբողջ բարդ նախադասությանը: Հմմտ.

Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր

Եվ արքայական դնեմ գերեզման: (ՎՏԵ, 177)

կամ՝

Զէ՞ որ Թուրքիան հիմա ուրիշ է, թուրք ազգի ղեկավարներն ուրիշ են հիմա: (ՍԽ, Ա, 23)

Բայց չէ՞ որ նա կրել է զենքեր,

Եղել է մեզ պես կյանքի սիրահար: (ԵԶ, ՊԲ, 16)

Խոսքի ներգործությունն առավել զորացնելու նպատակով գեղարվեստական ոճի մեջ հաճախ է հանդիպում միևնույն հարցական նախադասության կրկնություն բարդ նախադասության մասերում, ընդ որում դրանք կարող են ընդմիջարկված լինել այլ, հիմնականում պատմողական նախադասություններով: Նման դեպքերում հարցական նախադասության կրկնությունը խոսքի սկզբում և վերջում նշում է անշաղկապ կառույցի սահմանները, ձևավորում փակ կառուցվածք ունեցող նախադասություններ:

Հմմտ.

Եվ ինչպե՞ս ապրել

Թունոտ ու կարծր կաղապարների

Անշունչ արանքում,

Էլ ինչպե՞ս ապրել... (ՊՍ, ԵԼ, 108)

Ինչու՞ եկար, Վալոդ, գրանցվել էիր, առաջին տարիները դժվար կլինեիր, հետո տանելի, ինչու՞ եկար: (ՀՄ, 1, 35)

Բազմաբարդ անշաղկապ նախադասությունների մեջ նույն հարցական դերանվան կրկնությամբ կառուցված համազոր նախադասությունների բաց շարքը կարող է ընդմիջված լինել նաև այլ հարցական բառերով միջանկյալ կառույցով: Օրինակ.

Ինչպե՞ս եք ապրում, ի՞նչ կա - ի՞նչ չկա,

Ինչպե՞ս եք շնչում, ինչպե՞ս եք երգում,

Խղճի խայթի հետ հավիտենական

Ինչպե՞ս եք, ասե՛ք, դուք լեզու գտնում: (Թարգմ.)

Ընդհանրապես պետք է նշել, որ կրկնվող հարցական բառերը, այսպիսի

կառուցվածքներում խոսքի ոճական գունավորման իրենց հիմնական գործառնությամբ հանդերձ, նպաստում են նաև համադասական կապակցության դրսևորմանը, կատարում մի տեսակ շաղկապների շարահյուսական դեր: Սա վերաբերում է հատկապես այն համադասական անշաղկապ կառուցվածքներին, որոնց երկու մասերն իրենց հերթին բարդ նախադասություններ են (համադասական կամ ստորադասական) և հարցական բառերի միջոցով միավորվում են մեկ երկբաղադրիչ համադասական կառույցի մեջ: Բերենք մեկ օրինակ.- Ինչու՞ միլիցիոները պետք է գլխարկ դնի, հովիվը՝ փափախ, ինչու՞ եթե հովվի փափախը միլիցիոների գլխին են դնում՝ բոլորը հոհոհում են... (ՀՄ, 1, 65)

Բ) Մասերում գործածվում են տարբեր հարցական բառեր: Այս կարգի համադասական միավորյալ նախադասությունները անհամեմատ ավելի տարածված են գեղարվեստական բնագրերում և առօրյա խոսակցական ոճում: Կառույցի բաղադրիչներում գործածվող հարցական բառերը թելադրված են դրանց կոնկրետ բովանդակություններով և կարող են վերաբերել ինչպես նախադասության նույն անդամին, այնպես էլ տարբեր անդամներին կամ էլ ամբողջական նախադասություններին: Ահա մի երկու բնագրային օրինակներ.

Ո՞ւր է նա հիմա

Ո՞ւմ հետ է լույսի իր խաղերն անում

Ո՞ւմ է նա կանչում ու խուսափելով հեռանում անձայն... (ՎԳ, ԼԱ, 28)

Ի՞նչ ժողովուրդ եք, ու՞մ եք ծառայում... (ՀՄ, 1, 245)

Պետք է նշել, որ տարբեր հարցական բառերով ձևավորված հարցական բարդ նախադասությունների բաղադրիչները ավելի հաճախ բուն հարցում են արտահայտում, հազվադեպ՝ ճարտասանական հարցում: Նշված տիպին պետք է հատկացնել, ըստ երևույթին, նաև այն նախադասությունները, որոնց մասերից մեկում հարց ընդունող դիմավոր բայը գեղչված է: Օրինակ.

Ախար շատն են քչացնում, ընկեր Եղիկյան, Դուք քիչը ո՞նց եք քչացնում, ո՞ր խղճով: (ՀՄ, 1, 32)

Պետք է նշել, որ տարբեր հարցական բառերով նախադասությունների գուգորդումը միշտ չէ, որ առաջացնում է բարդ նախադասություն: Հաճախ դրանց միջև չկա հստակ քերականական առնչություն, թեև դրանք ձևավորված են բարդ համադասական նախադասության վերը քննված կաղապարի տեսքով: Հմմտ՝

Ի՞նչ կարծիքի եք, Ատամա՛ն, որտե՞ղ կկամենայիք ընդունել կամավորների ձեր գործաւար: (ՍԽ, Ա, 11)

կամ՝

Ո՞վ է հնարել, ի՞նչ եզ մորթել: (ՀՄ, 1, 97)

Գ) Հաճախ են հանդիպում նաև այնպիսի կառույցներ, որոնց բաղադրիչներից մեկը հարցական բառով, իսկ մյուսը՝ առանց հարցական բառի պարզ նախադասություններ են: Սրանց միջև առկա իմաստային հարաբերությունը սովորաբար ունի հետևյալ առանձնահատկությունը. առաջին (հարցական բառ պարունակող) նախադասության մեջ դրսևորված հարցումը (բուն կամ ճարտասանական) ավելի մասնավորվում-կոնկրետացվում է երկրորդ (առանց հարցական բառի) նախադասության միջոցով: Հմմտ., օրինակ.

Նրանք հիմա որտե՞ղ կլինեն, արդեն գալիս կլինե՞ն: (ՀՄ, 1, 441)

Էդ ո՞վ չի կարողանում, ե՞ս չեմ կարողանում: (ՀՄ, 1, 441)

կամ՝

Ե՞րբ էր, հիշու՞մ ես, օ՛, սիրտ իմ-

- այն ե՞րբ էր խշշում այդ աշունը,

Երե՞կ էր, տարինե՞ր առաջ,- ա՛խ, գուցե դա՛ր է անցել: (ԵԶ, ԱԶԵ, 150)

Անշաղկապ այսպիսի կառույցների մասերի միջև միավորական հարաբերությունը, անշուշտ, հստակ չէ, զգալի է նաև նրանց միջև առկա առոգանական դադարը: Այս հանգամանքները որոշ իմաստով սահմանագատում են այսպիսի կառույցները միավորական համադաս նախադասություններից և մոտեցնում դրանք նախադասությունների կապակցությանը: Կարծում ենք, որ սրանք

պետք է դիտել իբրև միջակա օղակ Աշված երկու միավորների միջև:

Դ) Հարցական բառերի բացակայությամբ արտահայտվող հարցումների միավորումը համադասական կառույցի կազմում նույնպես հազվադեպ հանդիպող երևույթ է: Նման կառույցները համադասական պետք է համարել դարձյալ վերն արված վերապահությամբ: Հարցումը սովորաբար արտահայտվում է ստորոգյալի միջոցով, որը, ի դեպ, կարող է կրկնվել երկու մասերում: Օրինակներ.

Դու՞ր է գալիս այդ խորթ-օտարը **Ձեզ**,

Մի՞թե ձեր կողի ոսկորից է նա,

Ամոթը Ջևսի երասանի պես

Ձեր ճակատը չի՞ դադում շարունակ: (Թարգմ.)

կամ՝

Հիշու՞մ ես կոնյակը Սահակի,

Հիշու՞մ ես՝ Արփիկը, Անահիդան: (Ե2, Ա2Ե, 32)

2. Տրոհական հարաբերությունն արտահայտող հարցական համադասական նախադասություններ: Տրոհական հարաբերությունն արտահայտող համադասական կառույցներում, ինչպես հայտնի է, զուգորդվում են անհամատեղելի իրողություններ և ենթադրություններ: Պատմողական նախադասությունների համար Աշվում են իմաստային հետևյալ երանգները.

ա) թվարկվող իրողություններն ու ենթադրությունները բացառում են միմյանց՝ անկախ ժամանակից ու իրադրությունից: Այս դեպքում մասերի կապակցման համար գործածվում են *կամ* (մենադիր կամ կրկնադիր), *կամ թե*, *կամ թե չէ*, *կամ էլ*, *և կամ թե*, *թե շաղկապները*:

բ) Իրադարձությունները կամ փաստերը հաջորդաբար փոխարինում են իրար (կապակցությունն իրականանում է *մերթ...մերթ*, *մեկ...մեկ*, *մի՛ն...մի՛ն* կրկնադիր շաղկապներով)⁶:

Համադասական նախադասության այս տեսակը հաղորդակցային տարբերակների առատություն չի թույլատրում ամենից առաջ մասերի միջև առկա իմաստային կապի յուրահատկության պատճառով: Տրոհական նախադասությունների մեջ կա մի ուրույն կառուցվածք, որ կապակցվում է *թե* շաղկապով և արտահայտում է մասերի մեջ նկարագրվող իրողությունների ու փաստերի փոխադարձ բացուման իմաստ՝ ընդգծված ենթադրական երանգով: Այսպիսի կառույցների մասերը, իմաստային Աշված երանգ պահանջով, ուղղակի կամ անուղղակի հարցում արտահայտող հարցական նախադասություններ են:

Սրանց մասին Գր. Գարեգինյանը գրում է հետևյալը.

«Որպես կանոն, նման կառույցներում հարցական հնչերանգով է արտաբերվում *թե* շաղկապին նախորդող և ոչ *թե* հաջորդող մասը, հետևաբար և հարցական Աշանը դրվում է այդ մասի վրա»⁷: Այնուամենայնիվ, մենք նպատակահարմար ենք համարում հաղորդակցային առումով Աշված կառույցները հատկացնել ամբողջությամբ հարցական բարդ նախադասություններին, քանի որ նրանցում առկա ենթադրական-երկբայական իմաստային երանգը վերաբերում է երկու մասերին հավասարապես: Սրանով է պայմանավորված հենց *թե* շաղկապի հարցական հնչերանգը: Բերենք մի երկու օրինակ.

Իբրև Հիսու՞ս ես դու լյառ բարձրանում,

Թե՞՝ ավազակ ես լոկ դու մահապարտ: (Ե2, Ա2Ե, 135)

Պարսկաստան ջուրն այդպե՞ս էիք խմում, **թե՞**՝ վիակի էիք խմում, ջուր չէիք խմում: (ՁՄ, 2, 137)

Այդ քամի՞ն է թափում աշնան չոր սաղարթը, **թե՞**՝ օդի է թափվում իմ թւրած ուղեղին: (Թարգմ.)

Անուղղակի հարցումների դեպքում համադասական կառույցն ամբողջությամբ ստորադասված է լինում որևէ մտածական կամ ասացական բառով (հիմնականում՝ ժխտական խոնարհման) գլխավոր նախադասության:

⁶ Հմմտ. Գ. Լ. Գարեգինյան, Աշվ. աշխ., էջ 63-67:

⁷ Նույն տեղում, էջ 66:

Համաստրադասական այս կառույցներում ստորադասությունն իրականացվում է հիմնականում շարահարության միջոցով՝ թե շաղկապի կրկնությունից խուսափելու համար: Օրինակներ.

Զգիտեմ՝ սոցիալիստական պարտավորություն վերցրել է ու գերակատարե՞լ, թե՞ թերացել է նաև պետական պլանների մեջ: (ՀՄ, 1, 38)

Եվ բոլոր չո՞րս ոչխարը մորթվեց, թե՞ երկուսը՝ այդ էլ չիմացվեց: (ՀՄ, 1, 72)

Հետո Աբգաբը Հայկազին հարցրեց՝ քաղաքու՞մ է ապրելու, թե՞ կմնա գյուղում: (ՀՄ, 1, 54)

Գեղարվեստական խոսքում բավական տարածված են հարցական բաղադրիչներով տրոհական այնպիսի կառույցներ, որոնց երկու մասերն էլ բայական անդեն նախադասություններ են: Օրինակ՝

Լի՞նե՞լ, թե՞ չլի՞նել, - այս է խնդիրը:

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ,

Տանե՞լ գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,

Թե՞՞ սուր վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ

Եվ դիմադրելով վերջ տալ բոլորին: (Թարգմ.)

Խոսակցական լեզվի մեջ, հատկապես երկխոսություններում, թե շաղկապով տրոհական կառույցը կարող է կազմված լինել ճարտասանական հարցում արտահայտող այնպիսի բաղադրիչներից, որոնք տվյալ համատեքստում դրսևորում են նաև իմաստային այլ հարաբերություններ: Մասնավորապես ժխտման հակադրություն կարող է արտահայտվել տրոհական հարաբերությանը բնորոշ կաղապարով ձևավորված հարցական կառույցներում, որոնք գործածվում են խոսակցի հաղորդած փաստը հերքելու, դրան կտրուկ հակադրվելու նպատակով և, որպես այդպիսիք, հատուկ են հիմնականում բանավոր խոսքին: Համադասական այդպիսի նախադասությունները հոմանիշային փոխակերպման կարող են ենթարկվել ժխտման հակադրություն արտահայտող պատմողական կառույցի տեսքով: Հմմտ՝

Ես եմ սխալվե՞լ, թե՞ դու ես ինձ մոլորեցրել (Ոչ թե ես եմ սխալվել, այլ դու ես ինձ մոլորեցրել): Էդ գործը մենակ եմ անու՞մ, թե՞ իմացող մարդկանց հետ (Էդ գործը ոչ թե մենակ եմ անում, այլ...) և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, ներհակական և հավելական հարցական կառույցները հայերենին բնորոշ չեն և սակավ են հանդիպում հատկապես գրավոր խոսքում: Նշված տեսակների համադասական կառույցների մեջ հաղորդակցային առումով ավելի հաճախ են գուգորդվում պատմողական և հարցական բաղադրիչ նախադասություններ:

Համառոտագրություններ

ԵԶ, ՊԲ - Եղիշե Չարենց, Պոեմներ և բանաստեղծություններ, Եր., 1976

ԵԶ, ԱԶԵ - Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր Եր., 1983

ՀՄ - Հրանտ Մաթևոսյան, Երկեր, 2 հատորով, հ. 1, Եր., 1985

ՎՏ, Ե - Վահան Տերյան, Երկեր, Եր., 1989

ՊՍ, ԵԼ - Պարույր Սևակ, Եղիցի լույս, Եր., 1969

ՎԳ, ԼԱ - Վահագն Դավթյան, Լույս առավոտի, Եր., 1984

ՍԹ, Ա - Սերո Խանգաղյան, Անդրանիկ, Եր., 1989

Л. Г. ТЕЛЯН - *Вопросительные сложносочиненные предложения.* - Коммуникативные разновидности предложений, в частности их интонационные варианты, в армянском языкознании рассматривались главным образом в рамках простых предложений. Однако сочетание этих интонационных типов в составе сложных структур выявляет интересные особенности с точки зрения коммуникативной целеустановки. В статье описываются синтаксико-стилистические особенности одного из таких типов сложного предложения — вопросительных сложносочиненных конструкций.